

ՔՐԻՍՏՈՆԵՍԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. տես Բազմավէպ 1930, էջ 148)

Վստահ ենք որ անպտուղ չ'անցնին Պրոֆ. Սարգիսովսկու քրտնաջան աշխատութիւնը ինդոսի և Գանգէսի հովիտներու մէջ, և տանի յաղթանակն իւր պաշտպանած Արեւելոյն՝ Հոռմի վրայ, Ոգեւորութեամբ կը հետապնդենք նոյն ճանապարհով դէպ ի դրուած կէտ նպատակին, առանց հեռանալու մեր հայրենի երկրի սահմաններէն, որոնք գծուած են արիական ազնիւ ցեղի նախապատմական տիրապետողներէն: Ինչ որ Զրադեշտի առաջին աշակերտներն քաղցեցին և ուսուցին Վոգի տաճկ թորգոմայ և Աւքաւազի մէջ, աւանդաբար Ֆրացած է մեր ժողովուրդի մէջ, թորգոմ և Աւքաւազ եղած են մեր երկրի նախահայրերն, կամ Նահապետներն որոնց արդեանց համար կամ անոնց յաջորդաց տիրապետութեան ժամանակ երախտագիտութեամբ գրեցինք այնպէս կոչեր են և ընդունելի եղած է թէ մերձաւոր և թէ հեռաւոր ազգերուն. զոր օրինակ Հրէից, որք ըստ Մովսիսեան գրքերուն (եզրպտական տարեգրութիւններէն առած) Արարող ճանաչէին մեր երկիրն. բայց գերութեան տարիներու մէջ, Բաբելոնի գետերու ափին, շփուեցան Հայաստանցոց զօրքերու և վաճառականներու հետ, երբ մօտէն ճանչցան և սովորեցան անոնց նախնիքն կամ պատմութիւնն, սկսան կոչել «Տուն թորգոմայ ի ծագաց հիւսիսոյ» (եզեկ. ԼԳ. 6): Աշխարհագրական դիրքն ալ կ'որոշեն, Հայաստան համեմատութեամբ Պաղեստինի՝ հիւսիս է, և ծագաց կոչելով կ'իմանայ մեծ և փոքր կովկասու սարերն, ուր աւելի զօրաւոր էր Ասքանազեան տունն: Գարեբու ըն-

թացքին հետ, աւանդութիւններն կը փոխուին, բայց աւանդութիւն ստեղծողներն կը մնան նոյն և աշխարհի թատեր վրայ կ'երեւան մերձաւոր աշխարհակալի մը կամ դիւցազնի մը անունով: Այսպէս Հայ ժողովուրդն որ ի ծագաց հիւսիսոյ կ'իջնար մինչեւ Նիւնէի սահմաններն, կասպից ծովէն մինչեւ կասպաղովկոյ դաշտերն պիտի կոչուին Հայեր կամ Արմէններ, Հայկ դիւցազնի և յաղթող Արամի անունով:

Հայկական քաղաքակրթութիւնն յաջողեր է հազար տարի առաջ Ն. Ք. կազմակերպել հնուն, ներդաշնակ և ճոխ լեզու մը ընդունակ զրականութեան. ահա օրինակ քեզ Գողթան երգերն, Պիտաբոսի զրչին արժանի հատուածները: Հայկական զրականութիւնն կազմեցին երգչներ և բանաստեղծներն, և պատմութիւնը տաղաչափեալ, հեշտաւոր ըրին ժողովրդեան և դիւրաւ միտք պահելի, նոքա գեղէ գեղ, գաւառէ գաւառ թափառելով հին զրոյցներ և աւանդութիւններ կը սովորեցնէին ժողովրդեան, մինչեւ քրիստոնէութեան մուտն ի Հայաստան: Թէպէտ Գրիգոր Լուսաւորիչ, թէպէտ ժողովուրդի ընազդն մոռացնել տուաւ ընդհանրապէս մեր հնթանոսական գրականութիւնն, բայց պատմութեան հիմնական կէտերն, ազգային երեւելի դէմքերու յիշատակներն անմոռաց կը պահուէին ժողովուրդի յիշողութեան մէջ. յորոց ինչ ինչ թորեմացին ինքն իւր ականջով լսեր և հազորդեր է մեզ գրով: Ոսկէդարու մատենագրներն, յայտնի է գիտէին ազգային զրոյցները և վիպասանութիւնները և նախապատմական ժամա-

նակի անձերու զէպքերու ծանօթութիւն-
ները: Միթէ կարելի է ժխտել որ անոնք
կարողացած չէին նաեւ զՀերոդոտոս, Դիոն
կասիոս, Դէոդոր Սիկիւիացի, Պլուտար-
քոս եւայլն, եւայլն, անշուշտ ղեռ ու-
րիշ շատ հին հնդկական գրքերէն սով-
րած էին շատ բաներ և համեմատ գտնա-
լով զանոնք շատ բաներու մէջ մեր տոհմ-
այային աւանդութեան՝ յիշեցին իրենց զը-
րուածոց մէջ թէ մեր նախահայրերն եղած
են Յարեթեանք, Թորգոմի և Աքանազի
սերունդներուց, և անոնց երանէն ելած
է քաջադէպ և անուանի դիւցազն Հայկ,
որ ազատելով զիր ազգն օտարի բռնու-
թենէն և Հայաստանի զանազան ցեղերն
և տուններն՝ էր որ սիրով, և էր որ առ
տհնի միացուց, նախադարական վարչու-
թիւն հաստատեց, և իրեն սեփականեց
միլիաշխարհն, իսկ միւս գաւառներն թող-
լով բնիկ տոհմերու ըստ պատուոյ և աս-
տիճանի աւագութեան: Հայկն եղաւ ազ-
գային գլխապետ և ազատարար, որով
ազգն ալ զկրի մահուան, ըստ ժամանակի
սովորութեան աստուածացուց և հոգին
դասեց երկնքի լուսանորներու մէջ: Այս
զգացումն կամ համոզումն այնքան տար-
րացած էր հայ ժողովրդի սրտում, որ մեր
Ոսկէդարու Լուսաւորիչներն Սահակ և
Մեսրոպ, յառաջ քան զԹորենացին, յար-
գեցին Հայկ նահապետի անձնաւորութիւնն
և անոր հեթանոսական դիցաբանական
աւանդութիւնն իսկ, որ կը ներկայացնէր
որ այդ դիւցազն իրբեւ միաստուածու-
թեան կրօնքի և քաղաքական ազատութեան
պաշտպան և ախոյեան ընդդէմ ասորես-
տանուոյն միազլխապետ Բելին և սպան-
նելով մօտ քսան դար Ն. Ք. հայրենիքին
կրկին հիմնադիր եղաւ, և երբ Ս. Գրքին
թարգմանութիւնն առիթ ընծայեց, անոնք
երախտապարտ ոգով յուշարձան կանգ-
նեցին՝ ոչ յերկրի այլ յերկինս, դրոշմելով
Հայկի անունը Օրիոն համաստեղութեան
վրայ: Անշուշտ նոցա յոյն գրքերու մէջ
կարդացած էին Օրիոնի մասին գրուած
մը և մեր Հայկն առասպելին հետ համե-
մատելով՝ նմանութիւն մը գտած են երկու

դիւցազուններու միջեւ իրբեւ կտրիճ որ-
սորդներ: Եւ որպէս զի չկարծուի որ
բախտի բերմամբ եղած մի բան է, նոցա
երկիցս և երկցս ազուցած են Հայկի
անունը սրբադրոշմ տառից մէջ. «Եթէ քո
բացեալ իցէ զպատրուակ Հայկին (միգա-
մածն) (Թոր.) և յեսային. «Աստղը եր-
կնից Հայկին հանդերձ» . . . «Ի վերայ
եթնաստեղաց Հայկին» եւն: Եթէ Հա-
յաստան երկրի ժողովրդեան համոզումն
չէր Հայկի նախահայր լինելն, թարգմա-
նիչը Օրիոնի անունն հետ այս փոփո-
խութիւնն ուստի՝ շարժած պիտի անէին:
Եւ պէտք կար ժիւ դարեր անցնէին մին-
չեւ մարդկանց միտքն սրուէր իմաստու-
թեամբ և իմաստակութեամբ, տարակոյս-
ներ հանուէին թորենացու հաւատարմու-
թեան մասին, իւրաքանչիւր միտքն ու-
րախանար իւր քանդածին վրայ, առանց
կարողութեան ունենալու նորը անոր տեղ
դնելու: Հայկի առասպելն ունեցած է իւր
բարեբար ազդեցութիւնն հայ ճարտարա-
պետներու գաղափարի վրայ, ձեւակերպելու
մեհեաններու շինուածք յարմարութեամբ
երկնքի գմբեթին:

Վերադառնալով մեր նիւթի շարունա-
կութեան, պիտի ասէինք որ Պրոֆ. Ստըր-
չիկովսկու կատարելիք ուսումնասիրու-
թիւնը ծայրագոյն արեւելքում, ապացու-
ցանելու որ գմբեթի ծագումն արեւելքէն
է, գուցէ այդ ղեռ բաւական չլինի նպա-
տակին հասնելու, առանց կրկին վերա-
դառնալու և ուսումնասիրելու նաեւ Հա-
յաստանի քրիստոնէական շրջանէն առաջ
եղած մեհեանական շինութիւնները, զորս
Հայ-Պարթեւ թագաւորներ կերտեցին՝
Փոռլգիայէն բերած անդրիներն գետեղե-
լու համար. նոցա կանգնեցին եօթն բազին
Հայկի համաստեղութեան եօթն աստղերու
թիւով: Նոցա այդ դից տօնախմբութեանց
հետ կապեցին իրենց ազգային հանդիսա-
ւորութիւնք, Նոր Տարին, Նաւասարդն, և
ամանորաբեր կանխոց տարին:

Հայաստանի առհասարակ ղուրս չենք
կամենար խնդրել գմբեթի սկիզբն կամ
ծագումն, վասն զի Հայ ազգի լեզուն,

արիւնն սերտ կապուած է արիական ազնիւ ցեղի հետ, հին հայերէնի բառագիտութիւնն այնպիսի ճոխ փոխառութիւն ունի Սանսկրիտի և Զինդի լեզուէն որի նմանը չկայ ուրիշ ազգերու մօտ, պարազաներ որ պահ մը կը պարտադրեն մտածել որ կամ ցեղակիցը ենք և կամ երկար դարեր մնացել ենք անոնց տիրապետութեան ներքեւ և իւրացուցել ենք անոնց կրօնքն և քաղաքակրթութիւնն, ազատ արուեստներն և ձեռագործներն: Ատրուալուշաններն Հայաստանի սահմանէն ասդին և անդին հաւասարապէս կը վառէին, գմբեթաւոր տներու մէջ որպէս զի ծուին երթիկէն վեր, դուրս քաշուէր: Նոյն և նման էին իրենց գիւղական քաղաքի տուները, որու նկարագրութիւն ուրիշ տեղ տուած ենք՝ յիշելով յունաց մեկտրօնը: Ուստի պարզ գմբեթի գաղափարն կազմելու համար Հայը պէտք չունէր զրտի ազդեցութեան:

Մտածելով գմբեթի իբրեւ կեդրոնական շինութեան ճարտարապետական մասն՝ Հայաստան նոյնպէս պէտք չունէր ուրիշ դրացի ազգերուց մուրալու այդ գաղափարն ոչ Պարսկէն, ոչ Ասորիէն. մի միայն ազգ՝ Փոռեգացին կարող էր որոշ զեր կատարել գեղարուեստի և ճարտարութեան մէջ, որ անկախ Յուստանէն ստեղծեր էր իրեն համար ժողովրդային յոյսական կամ փոռեգական ճարտարապետութիւն մը: Արդ եթէ կը համարին որ Հայերն Փոռեգիայէն եկած են, ուրեմն իրենց հետ բերել են ճարտարապետական հիմունքներ: Եւ յիշուի երբ Արամ տիրեց Կեսարիոյ և կարգեց կուսակալ զՄշակ ու պատուիրեց որ հայերէն խօսին, չեմ կարծեր որ ներկայ ժամանակիս ուշիտ տիրապետողներու պէս քաղաքական շահերէն մղուած լինի զօտարներն հայացնելու, պարտադրելով հայերէն խօսիլ, այլ աւելի տրամաբանական է ասել որ կամ Հայ գաղթականութիւն եղած է, և կամ թիսպոլիայէն (?) գաղթողներու մի մասն հոն մնացած լինելով, օտարներու ազդեցութեան տակ մոռացեր էին իրենց ընդի փայտեղիքը, զոր Արամ

և Հայաստանի ժողովուրդն կը խօսէր այն դարուն: Արդարեւ կապաղաղովիոյ բնակիչներն հաւասար լեզու կը գործածէին առաջին և երկրորդ երրորդ Հայոց հետ, քայք ծայրագուստներն յունական քաղաքակրթութեան, զրականութեան ենթակուելով, իսպառ մոռացան հայերէնն և նոր գաւառաբարբառ ձեւացաւ, մինչեւ որ Յոյն լեզուն կապաղաղովիոյ մէջ տիրապետեց, և ժողովուրդեան գաւառաբարբառներ հետ զհետէ այլալեզեան և կորան, որով այսօր Փոռեգական լեզուն կորած կամ անստոյգ և անծանոթ մնացած է: Նոյն բանը պատահեցաւ Տայոց աշխարհի մէջ. Յոյն և Վրացի ազդեցութեան տակ, Հայերն ըստեղծեցին իրենց լեզու մը որ Մարերէն ըսուեցաւ. հայ բռնաներն անգամ ստեղծեցին իրենց ծածուկ լեզու մը, թէպէտ ոմանք գանոնք հին ցեղի մը բեկորներ կը հաշուեն Հայաստանի մէջ ցրուած, և ուրիշ բեկորներ Եւրոպայի այլ և այլ կողմեր ապաստանած և իւրացանչիւրեն ստեղծեցին էլ իւր յատուկ բարբառն: Ուստի մեր ուշադրութիւնն կեդրոնացնելու ենք երկու աղբիւրի վրայ, Փոռեգականին որ հեթանոս դարերուց ազդեր է ճարտարապետական մասամբ, և արիականին՝ կրօնական գաղափարականով, հիւսանալով նիւթապաշտութենէ, կուսապաշտութենէ, միայն և իւր հաւատալիքներն երկնքէն բերաւ յերկիր:

Արեւելեան և Արեւմտեան քաղաքակրթութեան երկու հոսանքներ պատուաստուեցան Հայ բունի վրայ: Հայերն քաղաքական և կրօնական կարգի սարգի մէջ կապուած էին հին Պարսիկներու և ապա Պարթեւներու հետ, իսկ քաղաքակրթական, զրական արուեստից, ճարտարագիտութեան, զէնքի և զգեաստուց մէջ, հնագոյն ժամանակներու աւանդութեամբ պահեցին Փոռեգական սովորութիւններն: Ընչ որ հին պատմիչներ սեղի աւանդած են նոցա առիւր են ժողովրդական զրոյցներէ, այս կարգին կը վերաբերին Հերոդոտոսի գրածներն, յորմէ ոչ պակաս հեղինակուած թեմաք զրած է Դեդոտր թէ «Բագոս իւր

աշխարհակալութիւնն մղելով մինչեւ Գան-
գէսի ակերն, վերադարձին իւր զինուոր-
ներէն երեսունհինգ հազար թողուց Հա-
յաստանի մէջ. առնց մէջ կային անշուշտ
և արուստաորներս ինչո՞ւն Բագոս թողուց
այդ երեսունհինգ հազարն Հայաստանի
մէջ եթէ Հայք անծանօթ և թշնամի եղած
լինէին յոյներին: Ոչ, այլ իբր ցեղակից
հիւրընկալութիւն գտան. գեղեցիկ և բերրի
երկրի մէջ, ընտրեցին իրենց բնակութեան
վայր և իսպաղուսթեամբ բնակեցան իսառ-
նուեցան, սերեցան և բազմացան մինչեւ
Հերոդոտի ժամանակ, և ի միասին արեւե-
լեան գաւառները վաշտերու, կրցան կազ-
մել ստուար գունդ որ Գերբընէսի բանա-
կին մէջ, իրենց թագաւորի հրամանին
ներքեւ Բագոսի զինուորներն և իրենց
սերունդներն ազգականութեամբ գրաւեցին
վանէն սկսած մինչեւ Երկրորդ Հայք և
լցին Եփրատի Արածանայ գործած ան-
կունն Երեղեաց և Դարանաղեաց գաւառ-
ներն, ու Դերշանն, վերջինս իրենց լեզուն
մինչեւ հինգերորդ դար չէին ուղղած և
մեր հեղինակներու Ալաթմանգեղոսի և Կո-
րեան երգիծանքներուն ենթարկուեցան՝
խեցրեկազոյն բարբառ կոչելով, որ հա-
մապատասխան է Միաբորի երկրորդ վա-
րուց մէջ գրածին, Փոտամայրիկ կոչելով,
և Դերշան կոչումն ալ գուցէ «յոյն» նշա-
նակէ, վասն զի մինչեւ ցայսօր Հայաս-
տանի կողմեր յոյներուն տրչան կ'ըսեն:
Մի շշանաւոր հանգամանք է, այս կող-
մերու հայութեան փոխգալկին ծագման
Բագոսի զինուորներուց, որ Տիգրան մեծի
բերած քորմերն փոքր Ասիայէն, գիտակ
լինելով հին պատմութեան Դիոդորի զըր-
բերուց, չուզեցին աւելի խորն գնալ,
այսինքն Ալլարաբեան անապատն, ուր կար
այլ տիպոր հայութեան և ըղծութիւն
պատճառելով, միացին իրենց աւելի մերձ
համարին հասարակութեան մէջ, և կը
խօսէին աղաւաղ հայերէն մը:

Եայտ է թէ Դերշանի հայ գաւառա-
բարբառի հետ տակաւին է դարուն տիրող
լեզուն յունարէնն էր. որով Ս. Մեհոբր
Բիւզանդիոն գնացած պահուն, տեղւոյն

եպիսկոպոսն Գինդ ընկեր ուղեկից կ'առ-
նու, որպէս աւելի վարժ յոյն լեզուի և
ծանօթ կեդեցականութեան:

Եկեղեաց, Դարանաղեաց գաւառներու
մէջ կային ուխտատեղիներ, ուր Աքնի հու-
րըն կը վառէր վաղ ժամանակներուց, բայց
զկնի յունասէր թագաւորներն նախապա-
տուութիւն տալով անդրիապաշտութեան,
հուրն կորոյս իւր կարեւորութիւնն վերա-
ցական զաղափարապաշտութեան հետ. իսկ
խորին Հայաստանի ուխտատեղիքն, զըր-
խաւորներն Բագաւան կամ Դիցաւան և
Աշտիշատ, միացին իրենց փայլի մէջ մին-
չեւ ի քրիստոնէութիւն. կային եւս ան-
շուշտ Աղծնեաց և Անձնեացեաց գաւառ-
ների մէջ, բայց անշնան և ոչ յիշատակա-
թեան արժանի. սակայն ոչ զերձ պարսից
ազդեցութենէն, անոր համար վարդանանց
կոխներու ժամանակ, տեղ տեղ դիւրու-
թեամբ վառուեցան ատրուաններ, յորոց
մէկն Ս. Սահակ Ռշտունեաց Եպիսկոպոս
աւերեց: Յունասէր թագաւորներու ար-
դինքն այն եղաւ, որ իրենց բերած ան-
դրինիւր համար վայելուչ մեհեաններ
կանգնելու համար, քաղաքներն քարա-
գործութիւնն և հանճարեղ ճարտարապետ-
ներ հին փոխգալկան ոճն շահագործեցին
զուգեկով տակաւին արուեստին հետ, որ
Ուրարտական դարերուց աւանդաբար կու
զար որդւոց որդի Նմանապէս Սելեւկեանց
ըընանին ալ Հայք անտարբեր չմիացին
յոյն մշակութիւն և զարգացուցին ճարտա-
րապետութիւնն, մասնաւորապէս գմբեթա-
ւոր մեհեաններուն, որոնք թէեւ չունէին
է դարու կատարելագործութիւնն, սակայն
հարեւան երկիրներու մէջ երեւցածներէն
աւելի բարձր էին և հոյակապ: Արտա-
շէսներու և Տիգրաններու շինել տուած
մեհեաններու գմբեթներն կը հանգչէին տա-
կաւին որմերու և որմասիւնեղու վրայ, որ
այն չէ ինչ որ լինելու էր քրիստոնէական
ճարտարապետութիւնն ուր գմբեթն ան-
շատուած որմերէն պիտի հանգչէր ուղղակի
սիւներու վրայ: Պարթեւական հին տա-
ճարներն անհամեմատ վեր են, վայելչա-
գեղ և ճաշակաւոր քան Պարսկականն,

Մարտիրոսանինը, ուր երեւում է, կարելի է ասել, կամ հայ կամ յոյն քարագործի ձեռք, վասն զի զուտ արեւելեան կամ հնդկական կնիք չի կրել։ Կիւրոսի վերագրուած գերիզմանն իսկ յոնիական զրպարոյցի կնիք ունի։

Մտրչիկովսկու ծայրագոյն արեւելք դիմելն՝ ունի իւր օրինաւոր պատճառն, վասն զի հնդերոպական ցեղերու մէջ, ամենէն հաւատարիմ աւանդապահն արեւելեան գեղարուեստին քննարկէ է Հայ ազգն, պահելով իւր մէջ դարաւոր աւանդական սովորութիւններն, որոնք կը դիւրացնեն գիտնոց ամենագոյի հնագիտական ուսումնասիրութիւնն։ Պատմական շրջանի մէջ սկիզբէն Հայն զգուշացաւ արեւմտեան նիւթապաշտութիւնից և անոր յարակից սնուտիւ պաշտութիւններէից, որով հետո քննարկէ անորի պաշտութիւնէն։ Հարկ է ընդունիլ որ «Ամենեցուն ճարտարապետն ուսուց գիմաստութիւն» ըստ Բենեկիէլի, նաև Հայ քարագործներուն բնականօրէն դիմել գրմանի ստեղծման, և թէ գմբէթաւոր եկեղեցիներէ կերտուածքն ինքնակերպ մ'է Հայաստան երկրին։ Նա եկամուտ չէ, այլ տեղական ծնունդ հայ մտքին և կրօնքի համոզումներուն, որով հասեր է այն զարգացման և կատարելութեան, որոյ համար արեւմտեան աշխարհն զուրկ կը պատուէ՝ առաջնութիւնն և փառքն յափշտակելու թերեւս Բիւզանդական կոչուած արուեստն, որ բնաւին արեւելեան է, մըշակուած և ճոխացած յառաջաւոր Ասիոյ և Ստորիքի արուեստներով, իրաւունք ունենայ պահպնելու լինելու և իրեն կորզելու գմբէթի պատիւն, ցուցադրած լինելով աշխարհի Յուստինիանոսի Ս. Սոփիան, որ իսկապէս նոր ճարտարապետութեան հրաշալիք մ'է. սակայն ո՞վ գիտէ թէ հայ ճարտարապետն, հէնց Ս. Սոփիայի զբմբէթի կառուցման մէջ շատ կարեւոր դեր մը կատարած չըլլայ, ինչ որ պատմութիւնը, քաղելով Պրոկոպիոսի խօսքերէն բաականն ասելի մեղի կը հասկացնէ, և հարկ է ուրիշ անգամ վերադառնանք այդ նիւթին, քացատրութիւն տալու համար։

Գովելի է արեւմտեան ճարտարապետներու ոմանց եռանդ ու նախանձախնդրութիւնն, ապացուցանելու իրեն և տեղական զարգացման արդիւնք իրենց միջնադարեան հին ճարտարապետութիւնն գմբէթաւոր եկեղեցիներէ։ Որինակի համար Ֆրանսացի երկու ճարտարապետներ Ռայմոնդ Ռէյ և Կ. Ալաու, խօսելով Ազուլտանիոյ գմբէթաւոր եկեղեցիներէ վրայ, տարակուսի տակ կը ձգեն այն կարծիքը թէ ունեցած ըլլան արեւելեան ազգեցուն թիւն։ Ոչ ոք կարէ արգելուլ իւրաքանչիւր ումնք կրակը իւր քաղաքին տակ քաշելու։ Սակայն լաւ էր որ դրանք կամաւոր մոսացութեան շտապին, թէ Դ դարէն սկսած մինչև ԺԱ դար անընդհատ ուխտաւորներու կարուսաններ Եւրոպայէն կը գնային Ս. տեղեր տեսնելու, և քաղաքագոյն Ֆրանսայէն էին գնացողներն ընդ որս ականաւոր ճուր քաղաքի եպիսկոպոսն Ս. Գրիգոր Այդ ուխտաւորներու զուրկէն կ'անցնէին գրեթէ միշտ Բենեդիկտեան երեւելի Ս. Բարաներ, որոնք միանգամայն քաջ ճարտարապետներ էին, իրենց վանքերուն և եկեղեցիներու հիմնադիր։ Այդ Ս. Բարաներն և անոնց ընկերացող իշխաններ, թող որ իրենց մարդիկներէ ձեռքով վերցնում էին օրինակներ և հանում արուստնակներ, այլ և բազում խոստումներով տանում էին հետերին Հայ արուեստաւորներ և քաղաքործներ, որովհետեւ արեւելքի ազգերի մէջ միայն հայերն էին որ չէին խորշեր ուխտաւորներից և համակրում էին արեւմտեան, և իլիլիկեան շրջանին բարեկամութեամբ կու կապուեցան իրարու հետ, ուստի հայ ճարտարապետի աշխատութիւնն յայտնի կերպով նկարուած և ուշադրութեան արժանացած է Պերիկէյօի (Perigieux) և Ազուլտանիոյ առաջին գմբէթաւոր եկեղեցիներու վրայ, որ է ասիւ Ֆրանսայի այն մասում, ուր քննարկէ զեռա յայտնի լեզուով և բարձր հին կեդտաց և Դրուիդներու սերունդներուց, բնագոյում մը նախապատմական ժամանակներից կը կապէր դարձեալ գիրենք, նոյն ժամանակներէն քնացող Հայ սերունդի հետ Բարդերն (Bardès)

ալ Այրարատեան երկրի մէջ թողին իրենց երգերու յիշատակն, Հայ աշուղներն կապեցին Բարսի (bardit) ծառի հետ, Արաւմանեկայ սօսիներն, որոց տերեւներու մեղմ և ուժով սոխչէն (հրգէն) համալուծիւններ կը հրււնէին ջուրմերն, Աշուղն նախապէս համալուծիւն ընող և երգիչ իմա և մարգարէ կը նշանակէր թերեւս:

Վերոյիշեալ ճարտարապետներ նախապատուութիւն ուզում են տալ յունաց, որովհետեւ Կիպրոսի մէջ գտած են ժԱ դարու գմբեթաւոր եկեղեցւոյ օրինակներ և ասում են անկից օգտուած ֆրանսացի ճարտարապետներն: Սակայն Կիպրոսի եկեղեցւոյ յատակագիծն համապատասխան է Հայ եկեղեցւոյ յատակագիծին, մանաւանդ Կ-Պոլսոյ մէջ նոյն ժԱ դարուն Պահլաւոնիներու շինել տուած եկեղեցւոյն, այն ժամանակ մայրաքաղաքի մէջ կար հոծ և ստուար հայուծիւն:

1. Հայ ժողովուրդն կ'առէ ֆալ աշիւ, գիր աշիւ տալ են. որ է գուշակութիւն ընել:

Ի նկատի առնելու է որ Հայոց անիշխանութեան ժամանակ սկսած Ե դարէն մինչեւ Ժ դարը Հայ ժողովուրդը Պարսից և Արաբաց ճշմարտ տակ ողողեց Տաւրոսի լեռնաշղթաներն մինչեւ Կիլիկիոյ ծովեզերեայ ամրութիւններն. իսկ Բագրատուն նեաց թագաւորութեան սկզբնաւորութեան նախօրեակին Աշոտ Մեծի համատարած միտքն ապահովելու Հայոց ապագան, նա ծրագրած և կտակած էր իւր յաջորդներուն գաղթականական ճանապարհով ձգատիլ ղէպ ի Կիլիկիա, պատռահոն մը ունենալու Միջերկրականի վրայ, որով Հայ քաղաքներն, ֆրանսացի ճարտարապետի մտքն դեռ չանցած, նա սպրդեր մտեր էր Կիպրոս ժԱ դարէն շատ յառաջ և կանգած էր նախօրինակ հայ գմբեթաւոր եկեղեցին սիւններու վրայ, իւր բնորոշ բարոյով, զոր չունին նախնական յոյն եկեղեցիներն, բայց զկնի Հայոց հետեւողութեամբ կառուցին ի թիսաղոնիկէ և յետոյ ուրեմն ի Կիպրոս և այլուր:

Շարունակելի

Հ. Գ. ՆԱԶԱԿՅԱՆ

«ԱՇՏԱԼԵ», ԿԱՅՈՂՔԿԱՌՍԵ

Դեռ նոր սգացեր էինք Դուբեմանի վրայ, դեռ նոր փակած անոր դամբանի կապիւրիչը, ամա ուրիշ գոյժ մը կը հասնի հիւսաւ գոյժ Մայրաքաղաքիս, հաղորդելով «Վշտալի» Հայրապետին մահը: Ո՛րքան տխուր է այս բօթը ազգ մ'ամբողջ կ'որբանայ, արդէն լքուած իր գոյուծեան սեւ բախտէն, ու սուգեր սուգերու կը քաղուին մեր սրտերուն մէջ, թերթերու մէջ, ինչպէս շանթով խարազանուած թուլս ամպեր:

Ոչ այնքան 84 տարիներու բեռան տակ ճնշուած, որքան ապառուժ ժամանակներու դէմ հերոսական պայքարով նա կ'իյնայ

հիսաւուրց մայրիկ մը պէս վսեմսրէն, հանդարտօրէն:

Յատկանշական բառով մը «Վշտալի» նա ինքն արդէն բնորոշեր էր իր բովանդակ կեանքը, եւ Ս. Լուսաւորչի յաջորդներուն հաղորդաւոր փառապանծ շարքին մէջ իր գրականիք դիրքը:

Ոչ մէկ կամոդիկոս անցաւ եւ ապագայ, այնքան դառն ժամանակներ, այնքան ահաւոր մարտիրոսացումներ կրած է եւ պիտի կրէ քան Գեորգ Ե-ը, իր 19 տարուան շրջանին մէջ, երբ հասարակաց հօր աչքին սուգեւ կը խոխողուէր, կը մորթուէր խրժ-